

Յարեկան գինը 10 բուրդի, կես տարվանը 6 բուրդ:

Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄԵԼԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առիթ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱԼՆԱԿՈՒԹԻՒՆ

Կնոջ բարոյականացնող ներգործութիւնը գրա-
վանութեան վրա.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
խապաշար վաղեմի ուսուցիչ. Նախապաշար
վաղեմի ուսուցիչ. Նախապաշար վաղեմի ուսուցիչ.
—ԱՐՏԱՔԻՆՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիայի քա-
ղաքականութիւնը. Արտաքին լուրեր. —ԽՈՒՆ
ԼՈՒՆԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ. Երազ:

ԿՆՈՋ ԲԱՐՈՅԱԿԱՆԱՅՆՈՂ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱ

I

Երբ քան տարի սրանից առաջ մենք
սկսեցինք հրատարակել «Մշակը», մեր
գրողները կարծում էին միմիայն տղա-
մարդիկ: Կանայք զեռ ևս պահանջ չունէին
հետեւի մամուլին, պահանջ չունէին կար-
գայ հայերէն լեզուով: Եթէ մի երկուսը
կային որոնք մեր լրագրի գուցէ և առա-
ջին համարից կարդում էին մեր գրուած-
ները—այդ մեզ յայտնի չէր: Մեր խօսքը
ներգործութիւն ունէր ուրեմն միմիայն մեր
հասարակութեան կէսի վրա, այն է աղա-
մարդկանց վրա, ուրեմն ներգործում էր
մարդկային հասարակութեան մի սեւի վրա
միայն, ներգործում միմիայն տղամարդու
վրա և ոչ թէ ընտանիքի վրա, որը
հասարակական կազմակերպութեան կորիզն
է:

Մեր հայոց մամուլն առհասարակ, և
մանաւանդ քան տարի առաջ, արտակարգ
վիճակի մէջ էր գտնվում: Հայոց մամուլը
պէտք է կատարէր և լրագրի և ամսագրի
գործը և փոխարինէր իր գործունէութեամբ
և դրականութեան գործը: Հայոց լրագրերը
մինչև այժմ էլ չէ կարող բաւականապէս
խնայել ամեն երկրում միմիայն հասարա-
կական և քաղաքական առօրեայ հարցերի
քննութեամբ: Ուրիշ երկրներում բացի
մամուլից կան և գիտութիւն, և հրա-
պարակական փողոցներ և գրականութիւն,
այդ բոլոր լայն նշանակութեամբ,—իսկ մեզ
մտ մամուլը, կամ աւելի լաւ է ասել լրա-
գրութիւնը պէտք է ջանայ ամփոփել իր
մէջ ամեն բան, պէտք է աշխատէ իրանով
լրացնել միւս կրթիչ ֆակտորների բացա-
րայինութիւնը, պէտք է բացի առօրեայ հար-
ցերը յայտնիութեան առաջ տանի և ընդհա-
նուր քաղաքակրթական աշխատանքը, պէտք
է շօշափէ, յարուցանէ, լուծէ ազգի վիճա-
կին, փողովբէր կենսական վերաբերեալ և
ընդհանուր կուլտուրական հարցե-
րը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱԶ

Երեկոյեան տաւան և մէկ ժամն էր. ես նստած
էի իմ գրասեղանի վրա, գիտաւորութիւն ունե-
նալով մի յղուած գրելու: Սակայն ոչ մի միտք
չէր գալիս գրելու... Մեծ սենեակը կատարեա-
պէս մութն էր երևում, լուսաւորված լինելով մի-
այն գրասեղանի վրա դրված երկու մոմով...
Ես հաշտեցաւ ուղղեցի իմ առջև եղած առարկա-
ների վրա և ակամայ կենտրոնացի հայեացքս իմ
գլխաց պատի վրա կախված պատկերի վրա: Դա
սկսելով անհիշելի մի ահագին պատկեր էր, որի վրա
պայծառ գոյնիւրով նկարված էր մի հերարձակ
հրաշալի կին, որը նստած ամայի դաշտում գտն-
վող ինչ որ քանդակ ձևութեան աւերակների
վրա, մի ձեռքով ընկնում էր քարին, իսկ միւսն
ընկած ունէր ծնկների վրա: Կնոջ դէմքը մեզմէ

Պատկերացրէք ձեզ մի դասախօս, որի
լսարանը միմիայն տղամարդկանցով է լին-
ելու: Երեկոյեան ձեզ մի թատրոնական խումբ,
որը խաղում է այնպիսի մի դասլիճի առ-
ջև, որի բոլոր տեղերը միայն տղամարդ-
կանցով են բռնված, երեկոյեան ձեզ մի
թատրոնական գրուածք, որի բոլոր դերերն
ու գերակատարները միմիայն տղամարդիկ
են, վերջապէս պատկերացրէք ձեզ մի պոե-
տիկոս, հրապարակաբար գրութիւնը,
երբ նա գիտէ, հաստատ գիտէ, թէ գրում
է միմիայն ընթերցող տղամարդկանց հա-
մար և չունի ոչ աշխատակից, ոչ էլ կար-
գացող կանանց շրջանից, ուրեմն հաւատա-
ցած է, որ իր գրչով, իր յայտնած մտքե-
րով կարող է ազդել միմիայն տղամար-
դու վրա և ոչ թէ ընտանիքի վրա...

Պարզ է որ այդ արտակարգ գրութիւնը
կազմէ և գործի գրելու ձևի, մտքերի ար-
տայայտելու եղանակի վրա, նոյն իսկ ոճի
վրա, մենք աւելի կասեմք՝ կազմէ քաղա-
փարի եղութեան վրա...
Պարզեցիտա, հրապարակաբար, գիտե-
նալով որ իր ընթերցողները միմիայն տղա-
մարդիկ են,—այն էլ հասարակութեան մի-
ջին կամ մինչև անգամ ստոր դասակարգի
տղամարդիկ, քանի որ ինտելիգենտ դաս-
կարգը սկզբից արհամարհանելով էր վերա-
բերվում դէպի իր գործունէութիւնը, հա-
ւատացած լինելով որ ոչինչ նոր բան չէ
կարող սովորել հրապարակաբար մի-
ջինից,—այդ սեւակ հրապարակաբար
յարմարեցնում է իր գրելու ձևը, իր մե-
քերն արտայայտելու կերպը այն տարրի
հասկացողութեամբ և ըմբռնողական ընդու-
նակութեամբ, որի հետ գործ ունի:

Այդ է պատճառը, գուցէ որ սկզբից
«Մշակը» գրում էր և աւելի մատչելի լի-
զուով, և տալիս էր իր գաղափարներն
աւելի մատչելի կերպարանք ու բնաւորու-
թիւն, մի և նոյն ժամանակ ճանաչելով իր
ընթերցողների դարգացման աստիճանն ու
նրանց մտաւոր թմրութիւնը, գիտենալով
թէ նրանց դարեւոր անյարժութիւնից մի
կերպ սթափեցնելու համար արդար միջոց
ձեռնարկութիւնը, առաջադէմ գաղափարը
յայտնելու ժամանակ պէտք էր ազդել և
այդ ընթերցող տարրի արտաքին զգայա-
րանքներ վրա,—նա ընդունեց մտաբանող
սխառեմը, խիստ և կտրուկ գրելու ձևը, իր
հակառակորդների դէմ, որոնց նպատակ
ունէր հասարակութեան աչքում ջախջա-
խել, գործ էր դնում այն, ինչ որ անուշա-
նում և ոչ հայհայանք, այսինքն ամեն բան
իր յատուկ բառով կերելու սովորու-
թիւնը: Գուցէ այդ գործունէութեան մէջ

տխուր արտայայտութիւն ունէր, նրա սիրուն,
մարջանի պէս կարմիր շրթունքները փայտում էին,
սակայն տխուր ժպիտով, երևան հանելով մար-
գարիւնների պէս սպիտակ երկու շարք առանցքի
նրա սեւ, արտայայտել աչքերը, սեւ և երկար թիւ-
թեւունքների տակից, լի մեղամաղձոտ զգաց-
մունքով անսահման հեռաւորութեանն էին նա-
յում: Նրա մերկ և չորսալի բազումների սպի-
տակութիւնը աւելի էլ աչքի էր ընկնում կարմիր
զգեստի ֆոնի վրա... Երկար զգեստի տակից ե-
րևում էր մի հատ փղբոյի հրապուրիչ ոտը...

Ես զմայլված նայում էի այդ պատկերի վրա և
գրելու, որը հազիւ երկու րոպէ էր գրել առջև
դրված թղթի վրա, յանկարծ ընկաւ ձեռքիցս և
մի անկարգաբար սարսուռ տիրեց ամբողջ մար-
մինս... Ես նայում էի պատկերի վրա և աչքե-
րիս չէի հաւատում... Հերարձակ հրաշալի կինը
փողը առ փողը բաժանվում էր պատկերի կտա-
ւից, դուրս էր գալիս և շրջանակից, կենդանա-
նում, ոտի վրա կանգնում, ուղղվում, մեծանում
էր և հետզհետէ մօտանում էր ինձ... Ահա նա
մօտ է արդէն, բոլորովին մօտ, նա կանգնած է
գրասեղանիս այն կողմը, նրա շրթունքները շար-

անգամ և ան-
գունակ կերպ, և արդար բարկութիւն, և
նոյն իսկ չափազանցութիւն ու մասամբ
անարդար վերաբերմունք դէպի հակառա-
կորդները,—բայց ի՞նչ արած. ուրիշ կերպ
հնար չէր լինի սթափեցնել տիրող ընդհա-
նուր թմրութիւնը, ազդել դարեւոր մոտա-
ւորապէս անզամայց ինչպէս անշարժ հա-
սարակութեան արտաքին զգայարանների
վրա...

II

Յանկարծ նոյն հրապարակաբար իմա-
նում է, որ բացի տղամարդկանցից, մի տաս,
տասն և հինգ կանայք սխառում են կարգա-
յի գրուածները և փոքր ինչ յետոյ այդ
կանանցից մէկը ջնջվում է, որը եթէ ոչ
իր աշխատակից, բայց իր մշտական լծա-
կից հարս կենքի և գործունէութեան ըն-
կերուհի է դառնում: Եւ ահա հրապարա-
կաբար գրելու ձևը սխառում է մեղմանալ,
նրա գաղափարները սխառում են մի այլ ըն-
թացք ընդունել, նրա ոճն անգամ աւելի
զգայնաւոր, աւելի կիրթ է դառնում,—նա
ոգևորվում է ներշնչվում է մի նոր և
իր համար մինչև այժմ չեղած, մի ան-
սովոր ոգով... Նա իր գրասեղանի մօտ
նստած, գրէր ձեռքով բռնած ժամանակ
մտածում է. պէտք է այնպէս գրեմ, որ
նրան կարողանամ կարգաւ, նա կը քննա-
դատէ իմ գրուածքը ոչ թէ տղամարդու
խիստ և անտղորմ լոգիկայով, բայց կանացի
նուրբ զգացմունքով:

Ձուր են կարծում, որ ոգևորվել կնոջ
համարութեամբ կարող է միմիայն բանա-
տեղծը, նկարիչը, վիպագրողը... Այդ հա-
մարութեամբ, թէ և բոլորովին ուրիշ
կերպ, կարող է ոգևորվել և հրապարակա-
բար գրել և նոյն իսկ քաղաքական գործիչը: Ե-
րեկոյեան ձեռքիցս Ստիւարտ-Միլլ խոս-
տովանվում է, որ իր պոլիտիկական
գրուածքների մէջ յայտնված մտքերի մեծ
մասը նա պարտական է իր կենքի ընկե-
րուհու ներշնչմանը, յայտնի քաղաքական
գործիչ Գլադստոն, ինչպէս պատմում են,
իր ոչ մի ձուր չէ կարող արտասանել պար-
լամենտում, եթէ խօսելու ժամանակ իր
գիմաց չը տեսնէ պարլամենտի լոժաներից
մինում իր կնոջը...

III

Անցնում են տարիներ: Հայ հրապարա-
կաբար գրող համագումար է որ ոչ թէ միայն
իրան յայտնի մի հատ կին, և իրան ան-
յայտ մի երեք, չորս ուրիշ կանայք են
կարծում իր գրուածքների ու համարում
իրան, այլ համակողմանի ու կարգա-

ցողների թիւը կանանց սեւից հետզհետէ
բազմանում է: Այսուհետեւ բացի մի հայ
կնոջ անձնական համակրութեան, որը
և եղել է իր առաջին ոգևորութեան ընդ-
նապատճառը, նա հիմա ունի իր առջև
և հայ կանանց հաւաքական համա-
կրութիւն: Կանանց այդ ամբողջ կոնտինգեն-
տից նա իր երեկակցութեան մէջ ստեղ-
ծում է մի վերացական, ամփոփ ի գէտ
մի ընդհանուր մարմնացած կատարելատիպ
հայ կինը...

Այսուհետեւ նա գիտէ թէ ազդելու է
իր յայտնած մտքերով ընթերցող հասա-
րակութեան ոչ միայն կէսը կազմող տղա-
մարդկանց տարրի վրա, բայց և նոյն հա-
սարակութեան միւս կէսի վրա էլ, նա ազ-
դելու է հայ ընտանեկան ընկերակցութիւնը
կազմող ոչ միայն մի անդամ վրա, այլ
նոյն ընկերակցութեան երկու անդամներ
վրա էլ... Ուրեմն այսուհետեւ յայտնված
մտքերի կրթիչ ներգործութեամբ կենթադ-
րվի հայ ընտանիքի ոչ թէ միայն մի մա-
սը, այլ ամբողջ ընտանիքը:

Եւ հայ կանանց հաւաքական տարրը իր
մտքով ամփոփելով մի ընդհանուր ի գէտա-
լի մէջ, հայ հրապարակաբար գրող
հետեւ իր աչքերի առջև պատկերացրած
կունենայ ընդհանրապէս հայուհու
Եւ այսօրվանից մտնենալով գրասեղանի և
սկսելով գրել, նա կը մտածէ. «Դու պէտք
է գրես այնպէս, որ հայ կինը քեզ կար-
գայ, վաղը, երբ համարը մամուլի տակից
լայս կը տեսնէ, նա քո գրուածքը կը կար-
գայ, նա քեզ կը քննադատէ իր նուրբ
քննադատական իմաստով: Ուրեմն զգոյշ
եղի՛ր, աւելի զուսպ եղի՛ր, աւելի անկողմ-
նապահ եղի՛ր, աւելի արդար եղի՛ր նոյն
իսկ դէպի քո հակառակորդներ... Սակայն
այդ մեղմացնող այդ չափաւորող, այդ բա-
րոյականացնող ազդեցութեան տակ մի
կորցրու քո ընդունակութիւնը, քո ստեղ-
ծագործական աշխատանքին յատուկ վաղե-
մի ուղղութիւնը... Գոյթ չէ, եթէ շարու-
նակելով մտաբանել վատը և վնասալարը,
շարունակելով բանալ հասարակութեան
տեղեկ կողմերն ու մերկայանել հայի բա-
րոյական վերքերը, դու առ ժամանակ, բո-
ւաւական կերպով գուցէ և զգուշաց կը
պատճառես հայ կնոջ նուրբ զգացմունքին,
փոյթ չէ, ասում եմ, որովհետեւ հայ կինը
իր առողջ խելով շուտով կը հասկանայ,
որ իր կողմն է, այդ հասարակական
զգուշելի վերքերը ուսումնասիրելուց, նրանց
հետ ծանօթանալուց յետոյ,—նոյն մեղմաց-
նող, բարոյականացնող ներգործութիւն ու-
նենալ և հայ հասարակութեան վրա, ինչ

ես քեզ սիրում եմ և ատում եմ մի և նոյն
ժամանակ: Եւ դու աղջիկ էի, երբ քան տարի
սրանից առաջ սկսեցի կարգաւ քո գրուածքները,
ես այն ժամանակ արդէն սիրեցի քեզ, առանց
քեզ տեսած լինելու, ես յափտակված էի քեզա-
նով, երբեք քեզ տեսած չը լինելու, ես ձա-
նաչեցի քո մէջ մեր, կանանց իրաւունքնե-
րի պաշտպանին, ես սիրեցի քեզ, որովհետեւ քո
զրույթ դու ուղղում էիր դարի տալ հայերին, ա-
զատ թուրք անելու դէպի համամարդկային քա-
ղաքակրթութեան լայն ասպարեզ, դուրս բերել
նրան առաջագիմութեան փառաւոր ճանապարհի
վրա... Սիրելով քո մտքերը, ես սիրեցի և հայոց
լեզուն... Ժամանակներն անցան. այժմ ես այլ
ես աղջիկ չեմ, ես կին եմ մայր եմ. մի կողմից
ես աւելի փորձվեցաւ, իսկ միւս կողմից անընդ-
հատաբար և քայլ առ քայլ շարունակելով ըն-
թանալ քո ետեւից,—ես հիտաթափեցաւ... Հետ-
զհետէ դու ինձ ատել տուցիր այն, ինչ որ սկզբ-
ից սիրել էիր տուել... Գուցէ քո գրույթ ինձ
գրաւեցիր դէպի քո մտքերը, քո զգույթ ինձ
համար նոր արդարաց բացի, իմ մէջ նոր կենք
ներշնչեցիր, պաշտել տուցիր իմ մոռացված

մեղմանցող և բարոյականացնող ներգործութիւն նա ունեցաւ և հայոց մամուլի վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԳԱՎԱՍՏ ՎԱՆՔԻ ՈՒԹՅՈՒՆ

Իմ հեռագրում ես ասել էի. «Օգոստոսի 18-ին Պարսկաստանի Նախաժողովի անդամները հաւաքուիմ են բազմաթիւ ուխտաւորներ: Ես ակամատես եղայ մի սարսափելի ընդհարման, որ տեղի ունեցաւ հայերի և պարսիկների մէջ, և որը վերջում ընդունեց ծանր կերպարանք: Հայերը ծեծեցին պարսիկներին, հայերից մէկը մեռաւ, մէկն էլ վիրաւորվեց: Պարսիկները բարձրացան սարը, իսկ հայերը փակվեցին վանքի պարսպի մէջ: Այսպէս հրացանաձգութիւն: Երեկոյան պարսիկները փախան: Միւս օրը ուխտաւորները առանց փորձանքի անցան սահմանը: Մանրամասնութիւնները նամակով:»

Եւ անա նամակով կատարում եմ իմ խոստումը:

Նախ քան բուն եղելութիւնը նկարագրելու, ես հարկաւոր եմ համարում ձեռք մի քանի խօսք ասելու Նախաժողովի վանքի մասին, որպէս զի պարզ հասկանալի լինի դէպքը:

Գուրս գալով Ուրդուբադից, և անցնելով Զուլան, ու Հին-Ջուղայի դիրքը, մօտ 12 վերստ էլ դէնը գնալով, Երասխի ափով, դէպի պարսկական Կարա շաւաղ գիւղը, դուք անցնում էք սահմանը, և դիմում դէպի վանքը: Նախաժողով, այդ ձին և նշանաւոր մենաստանը չինված է յիշեալ գիւղից մի քանի վերստ հեռու, մի ձորի մէջ: Երեք կողմից վանքը ընդգրկված է լեռնաբեր, չորրորդ կողմից ձորի բերանն է: Զանաւոր վարդապետները աճեցրել են այդ ձորում մի փոքրիկ անտառ, որի ծայրին, ձորի բարձր կողմում չինած է վանքը: Համեմատելով չրջապատող դիրքի հետ, վանքը բաւական ցածր դիրք ունի, այնպէս որ շրջապատող բլրակների վրա կանգնելով՝ կարելի է լաւ տեսնել վանքի շինութիւնների կոտորները, և մինչև իսկ բակի ներսը, թէև այդ շինութիւնները չրջապատված են պարսպով: Միակ մուտքը վանքի դարպասն է, թէև մուտքերը շատացել են, պարսպի քարուքանդ լինելու պատճառով:*)

Աստուածածնի տօնի օրը և մասամբ էլ ս. Խաչի տօնի օրը, գլխաւորապէս Նախիջևանի գաւառից և պարսկական մօտիկ գաւառներից ահազին բազմութիւն է գալիս ուխտի: Մի ժամանակ ուխտաւորների թիւը հասնում էր հազարների, վերջին ժամանակներս գնալով գնալով՝ քչացել է, և այս տարի ուխտաւորների թիւը միայն 500-ի էր էր հասնում:

Ինչպէս հայկական բոլոր ուխտաւորներին հայերի ժամանակ, շաբաթ օրվանից սկսած, երբ հաւաքուիմ են ուխտաւորները, ամենքն էլ քէֆի ետեղին են ընկել: Զուռնա, երգ, քնամանչա, պար, թաւ, եռլի, հարայհոր, ծիծաղ, երթեկեկութիւն.—այդ բոլորը միացած միմանց հետ, մի այնպիսի կենդանութիւն էր տուել տարիներ:

*) Մի ուրիշ թղթակցութեան մէջ մանրամասն էր գրեմ այդ վանքի մասին:

մայրենի լեզուն,— և ապա, երբ ես արդէն կատարելապէս տիրապետեցի հայերէն լեզուն, դու սկսեցիր հարուստիւ հասցնել տանջված սրտիս, սկսեցիր բանալ իմ աչքերիս առջև հայի զղուելի բարոյական վերքերը, սկսեցիր վրդովել անգործութիւնս, հիասթափ արեցիր ինձ, մի անգամից ատել տուեցիր այն, ինչ որ ես, իմ սրտի խորքից, իմ հոգու ամբողջ զօրութեամբ սիրել էի: Գու նախ գրաւեցիր ինձ դէպի մայրենի լեզուն, սիրել տուեցիր նրան, և երբ արդէն մտքերի ինձ մայրենի բարբառի սրբալիպը և ես արդէն սիրեցի նրան, ընտելացայ նրան,—այն ժամանակ նոյն իսկ այդ մի սիրած լեզուի միջոցով դու ըսակցեցիր բաց անել առջևս հայ տարրի տեղը, զղուելի յատկութիւնները... Ինչպէս երևում է, ընդ անկարագրելի վայելչութիւն էր պատճառում տանջել իմ այնպէս էլ տանջված սիրտս... Գու ամենամանղոյզ կերպով քաջեցիր այն վարագործը, որը ծածկում էր իմ աչքերիցս ժողովրդի կենսը, կոչու ձեռքերովդ յանկարծակի պատուեցիր այն քողը, որով ծածկված էին հայ ազգի դարձուր պակասութիւնները, և որն ընդմիջում բաժանում էր ինձ ամբողջից,— և անա դահձին

բով մեռելութեան մատնված վանքին և ամբողջ ձորին, որ մի դիտողի վրա թողնում էր մի ուրախացուցիչ տպաւորութիւն: Իմ անալ ես տեսնում էի մի ահագին բազմութիւն, դանազան տեղերից եկած, և դանազան պարագմունքի, որը իրան նուիրել էր ինքնամոռացութեան հասցրած քէֆի, կարծէք ուղում լինէր մոռանալ իր առօրեայ տանջանքները, դառնութիւնները...

Այդպէս շարունակվեց մինչև կիրակի օր, ժամի 3-ը: Ամբողջ օր ու զիշեր քէֆ արած, զինուղորչներով տաքացած ժողովուրդը իրան երջանիկ էր գգում...

Այդ օրպէս իմ մի քանի ծանօթների հետ միասին վանքի թանգարանում դարձված էինք հնութիւնները տեսնելով:

Յանկարծ օղը թնդաց.

—Կուր է ընկել թուրքերի հետ. մարդ սպանեցին:

Ահագին բազմութիւնը շարժվեց դէպի դարպասը:

Պէտք է ասեմ, որ այդ օրը վանքի հարևան վ. արմազի ար պարսկական զիւղից պարսիկներ են դալիս վանքը վաճառելու միտք, ոչխար, խոտեղէն և այլ մանր-մուր բաներ: Գրանք տեղաւորված էին վանքի դրսի բազում, որովհետեւ առհասարակ յայտնի են իբրեւ աւաղակարարոյ մարդիկ, այդ պատճառով նրանց թողլ չեն տալիս վանքի պարսպների մասերը մտնել:

Անա հէնց այդ պարսիկների հետ էր սկսված կուր վանքի դարպասի դիմաց:

Ուխտաւոր հայերից մինը, մի չնչին պատճառով կուռում է մի պարսկի հետ: Կուռողները հայհոյում են միմեանց մասաբը (հաւատք,—ամենամանր հայհոյանքը մասմետականների մէջ): Կուռվին ներկայ եղող թուրքերից մինը, առանց երկար մտածելու, գոռում է.

—Խեղեք:

Այդ խօսքը արդէն բաւական է լինում, որ արեան սիրահար մի խումբ պարսիկներ յարձակում գործեն: Ասում եմ արեան սիրահար, որովհետեւ վերջին ժամանակներս Երասխի ափերում միշտ կարելի է տեսնել գլխաված, ոչ մի պարագմունք չունեցող պարսիկներ, որոնք բերդանկա հրացանը ունենը գցած, և պատրոնների ահագին շարքը մէջքին կապած, յանդուգն կերպով նայում են իւրաքանչիւր անցորդի վրա, կարծէք ասում են՝ «կեանքը մեզ համար գրօշարժ. զուարճութիւնս այս գնդակներն են, ապրուստն էլ այս հրացանը»: Անա դրանք, այդ բերդանկաւորներն էին, որոնք մասնաւոր կուռին ընդհանուր բնաւորութիւն տուին: Իսկ այդ բերդանկաւորների թիւը շատ մեծ է: Որինակ, հէնց վերջինիս վարձապետը գիւղացիներից ամենաքիչը 20—30 հոգի բերդանկաներ ունեն և շատերը դրանցից եկել էին վանքը, իբրեւ պարսից շահերի կամաւոր պաշտպաններ:

Եւ անա լրբացած այն բանից, որ իրանց մօտ բաւական գնդակներ կան, պարսիկների մի խումբ՝ ծեծելով կուր մէջ խառնված հային, ուղում են նրան տանել...

Այդ բանը տեսնում են մի քանի հայեր, և «տարան» գոչելով վրա են տալիս: Մի քանի վայրկեան շանցած դրսի բակում սկսվեց մի սուսկալի կուր: Ուխտաւորների մի նշանաւոր մասը

վայել ձեռքով, մի առ մի սկսեցին դու ցոյց տալ ինձ՝ ինչպէս հայ ռաբիկ գիւղացին քանդում է իր ետքը տուրը, ինչպէս նա, դժոխային նախաձեռնից շարժված, իր հարեան համազղուղացու ցորենի դէղերն է ալրում, ինչպէս՝ պարզ շինականը հարստանում է ոչ թէ արհեստով, այլ իր համազղուղացիներին հարստահարելով, ինչպէս գիւղի վաշխառուն հրէշաւոր տոկոսների միջոցով ծծում է իր նմանի արիւն-քրտինքը, ընդմիջտ ստրկացնելով նրա հոգին, ապա դու ներկայացրի հայ կալուածատիրոջ՝ անխիղճ և հարստահարող, իսկ հայ գիւղացուն՝ գող: Այնուհետեւ դու մի առ մի սկսեցիր ցոյց տալ և հայ վաճառակաւոր անապատներում, և ինտելիգենտ անապատայականութիւնը, և հայ կնոջ անշարժութիւնը, և նայասիրութիւնը, տգիտութիւնն ու գոհնիկ նախապաշարմունքները, և հոգեւոր հովիւների անտարբերութիւնը: Այլ ևս ինչ ասեմ. վերջապէս ցոյց տուեցիր իրան հային՝ կրքոտ, նախանձոտ, վախկոտ, թուլամորթ, ստոր: Եւ անա անսահման յափշտակված սիրով քեզ սիրելուց յետոյ, ես ատելի քեզ իմ սրտի ամբողջ ուժով... Նախ դու յափշտակեցիր իմ

կաւ դուրսը, օգնութիւն անելու: Հայերի կատաղութիւնը բազմաբար սաստկացաւ, որովհետեւ, ինչպէս երևում է, պարսիկները այդ նոյն վանքում մի քանի անգամ արդէն իրանց թոյլ են տուել յարձակվել հայերի վրա... Բասն օրպէի ընթացքում հայերը օտի տակ տուին պարսիկներին մրցելի մի մասը և սկսեցին նրանց վանքից հեռու քշել:

Կուր բաւական կատաղի էր, բայց դեռ ոչ մի կողմից հրացան, կամ ատրճանակ չէր գործ դրված: Երեսուրդ այդ էլ եղաւ: Հալածական եղած պարսիկները բարձրացան սարը և սկսեցին հրացանաձգութիւն: Գրսի բակից հայերը պատասխանեցին նոյնպէս հրացանաձգութեամբ: Երեսուրդ լուր ընկաւ, որ մի հայ սպանվեց: Այդ կուր կատաղութիւն տարածեց ամեն կողմ: Ան-միջապէս դուրսը կուռողները տեղաւորվեցին պարսպի մէջ, և դարպասի դռները կողպեցին:

Հրացանաձգութիւնը քսան օրպէի չափ տաք բնաւորութիւն ստացաւ: Լեռներից պարսիկներն էին խփում, վանքից հայերը:

Կա կատարեալ պաշարման դրութիւն էր: Հրացանների օրոտի հետ միասին սկսվեց կանանց լաց ու կոծը, երեխաների աղաղակը: Դանր բօպէ էր: Մարդ չէր իմանում ինքնապաշտպանութիւն անի, թէ ուժից գնացող կանանց օգնութեան հասնի: Կանայք իրանց մարդկանց, քոյրերը իրանց եղբայրներին շինքին ընկած, աղաչում են հրացան չը խփել, յետ կանգնել, «պարսիկներն չը կատաղեցնել»:

Ես երբէք չեմ կարող մոռանալ հետեւեալը. աշխատում էինք մօտենալ պարսպի պատերում չինած պատահաններին՝ տեսնելու թէ ինչ է կատարվում դուրսը: Երբայտառող կանայք, առանց նազ անելու, խլում էին ձեռքից ատրճանակը և յետ մղում: Հէրիք է, հերիք, մեզ կը կոտորեն, մեզ կը մորթոտեն», դուռն էին սարսափած կանայք: Եւ երբ կրկին մօտենում էինք պատահաններին, իսկոյն կանայք ամեն կողմից կրկին գոչում էին.

—Դուրբան, ոտներիդ տակը մեռնում, յետ կացեք, պարսիկները սարից կը խփեն. թաղնվեցեք:

Երիտասարդները չը գիտէին իսկապէս ինչ անեն, արդեօք աղերսող մօրը, քրոջը լսեն, թէ առաջ գնան: Եւ պէտք է ասել, որ բազմաթիւ կանանց և երեխաների ներկայութիւնն էր ամենամեծ պատճառը, որ հայերը իրանց զսպում էին և աւելի պաշտպանողական դիրք էին բռնում...

Հրացանաձգութիւնը աւելի քան կէս ժամ տևեց: Կէս ժամից յետոյ փոքր առ փոքր դադարեց: Երկու ժամից յետոյ տիրեց մի փոքր խաղաղութիւն. թուրքերը լեռներից սկսեցին հեռանալ... Վանքի չրջապատում եղած 500 հոգին սկսեց մի փոքր կարգի գալ... Այդ միջոցին ամենքը միտայ մի բան էին հարցնում.

—Ո՞վ է սպանված, քանի հոգի են վիրաւորված:

Անցնելով մի բակից միւս բակը, անկարելի էր դիմանալ այն յուսահատութեան, որ նկարված էր կանանց և երեխաների երեսներին: Մէկը որոնում էր իր որդուն, միւսն իր ամուսնուն: Բանից երեւց, որ մի ջուղացիի երիտասարդ զին-

ւեղը, գրաւեցիր ինձ դէպի ինձ համար մի նոր, անծանօթ աշխարհ, ուղեցիկը իմ թոյլ քայլերս ինձ համար մի նոր ասպարէզի վրա,— և ապա, երբ ներս բերիր ինձ արդէն այդ նոր աշխարհի չրջանը, այն ժամանակ հետզհետեւ սկսեցիր ինձ ցոյց տալ այդ նոյն աշխարհի ոչնչութիւնը... Ուրեմն այսօր ընդունիր իմ ջերմ համբոյրիս հետ միասին և իմ անէծքս...

Այդ վերջին խօսքերն արտասանելիս, հրաշալի հայտնու ձայնը, կորցնելով իր մեղմ, գեղեցիկ հնչիւնը, որոտի պէս թնդաց, իսկ նրա հրեշտակային դէմքի գծագրութիւններն այլալիկով ընդունեցին ատելութեամբ ի հրէշաւոր արտայայտութիւն:

Եւ նա անմիջապէս անհետացաւ:

Ես ուղեցի կանչել, աղաղակել, պատասխանել նրան, արգարացնել ինձ նրա առջև, ես պարզեցի ձեռքերս դէպի այդ անմարմին տեսիլը,—բայց բոլորը դուր էր...

Գլուխս պտտում էր, ձայնս կոկորդիս մէջ խղզվում, և ես վերջապէս խռպոտ, հազու լսելի ձայնով կարողացայ չնջալ.

—Հայունհի, շնորհալի հայունհի, ես բաց արի

դակահար է եղել. նա մեռաւ կարճ ժամանակից յետոյ, իր ջանքի, յուսահատ կնոջ կռնքի վրա... Մի ուրիշն էլ վէրք էր ստացել ոտի վրա: Դատերի շորերը գնդակահար էին եղել, այնպէս որ շատերը մահից էին պրծել...

Ակզբում լուրեր էին պտտում, որ պարսիկները կողմից մի քանի հոգի են սպանվել, բայց վերջում յայտնվեց որ ոչ ոք չէ սպանվել, և պարսիկները միմիայն հայի քիօթակին էին արժանացել...

Փոքր առ փոքր վրա հասաւ մութը: Վանքի շրջապատը տիրեց խորին լուռութիւն: Այդ միջոցին, վանահօր ցանկութեամբ, դարպասը բաց արին, որպէս զի մի կերպ հաշտութիւն գցվի երկու կողմի մէջ: Մի խումբ պարսիկներ հաւաքվելով ասում էին, որ հայերը իրանց մրցեղէնը կորկրեց են, իրանց իրեղէնները, խանդալները վերցրել են, և բաւարարութիւն էին պահանջում:

—Համ արին էք թաղել, համ էլ եկել փող էք պահանջում,—պատասխանեցին շատ հայեր,— ձեռք ոչինչ չենք տալ, ուր ուղում էք, դնացեք, իսկ մենք մեր իմացածը կանենք՝ բաւարարութիւն ստանալու համար:

Պարսիկները հեռացան սպառնալով, որ վաղը ուխտաւորներին ճանապարհ չեն տալ, մինչև իրանց դրամական փնտը չը ստանան:

Հարկաւոր էր մտածել, թէ ինչ պէտք է անել, որ առաւօտը ճանապարհին ուխտաւորներին որ և է վտանգ չը հասնի: Ընդհանուր տրամադրութիւնը այն էր, որ պէտք է առաւօտը ճանապարհ ընկնել, առանց ուղե դարձնելու սպանողները վրա: Գրա հետ միասին մի նամակով տեղեկութիւն տրվեց պարսկական Զուլա, պարսից իշխանութեան ներկայացուցչին, Հաջի Միրզա Աղուլլային, որ նա 15 ձիաւոր ուղարկի ուխտաւորներին մինչև սահմանը անվտանգ անցկացնելու համար...

Կէս գիշերին դարպասը ծեծեցին: Գրան երկաթի չեկիւղեղը ոտի կանգնեցրեց ամենքին.— ո՞վ է եկել:

Բանից երեւց, որ եկողները Գարաշամազ գիւղի երկու հայեր էին: Նրանք պատգամաւորի պաշտօնով էին եկել: Պարսիկները թուր 50—60 հոգի վանքից հեռանալով, գնացել էին Գարաշամազ հայ գիւղը, կանչել գիւղի աղաւթկաններին և ասել, գնացե՛ք վանքը, ասեցե՛ք հայերին որ մեր փնտը տան, մեզ էլ մի թուղթ տան, որ սպանված մարդու համար դանգաճ չեն տալ, մենք էլ իրանց վաղը ճանապարհի վր տանք: Ապա թէ ո՞ ճանապարհ չենք տալու:

Պատասխան տրվեց այսպէս. «Թափած արիւն համար՝ ուր հարկն է կը յայտնենք: Ով փնտս է ստացել, թող գայ՝ ուռապց սահմանը և այնտեղ ստանայ: Արդէն մարդ է ուղարկված, որ զինուորները զան ուխտաւորներին անվտանգ ճանապարհ բանալու համար. ով զօշաղ է, թող գայ: Հայ պատգամաւորները այդ պատասխանը տալու պարսիկներին:

Միւս առաւօտ, ոչ մի պաշտպանութեան էլ չսպանվելով, առաւօտեան ժամը 5-ին ուխտաւորների ահագին քարվանք ճանապարհ ընկաւ: Չնայապահ ընկան տխուր սրտով:

Ժամը 6-ին արդէն Երասխի ափում էինք: Երասխը ներկայացնում էր մի հետաքրքրալի

քառաջև մեր խոր և զգուշի վերքերը, որոնք զի դու գտնելի մի դիւթական բալասան, որպէս զի դու քո հրաշալի, քրոջը ձեռքերով դէ՛նելիք դիւթական սպեղանի մեր վերքերի վրա...

Բայց նա ինձ չէր լսում, նա այլ ևս չը կար...

Յանկարծ մի խիտ դաղը զգացի ես զլուռում ամբողջ մարմնս ցնցվեց,— և ես զարթեցի...

Նրադ էր դա...

Գրասեղանիս մօտ, բաղկաթուռիս մէջ նստած ես քնել էի...

Արդէն լուսանում էր:

Եւ նայեցի գրասեղանիս վրա. մոմերից մինը հանդել էր, միւսը բոց արդէն մարում էր... Մարդը բոցի աղօտ լուսաւորութեամբ ես կրկին ճանաչեցի դիմացս պատի վրա, սե չրջանակի մէջ ամբողջված, աւերակների վրա նստած հեռարձակ գեղեցիկ կնոջ պատկերը...

Գ. Ա.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՌՈՂԴԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Աղայանց «Ռուսական լեզուի», ա. տ. նոր տիպ	25	կոպ.
2) » » Նոյն՝ երկրորդ տարի	40	»
3) » » Նոյն՝ երրորդ տարի	55	»
4) Գեորգիանց «Գեորգիանց լեզուի», ա. տ. նոր տիպ	40	»
5) » » Նոյն՝ երկրորդ տարի	50	»
6) Ռուսական «Начальная книга русского языка»	25	»
7) Մանդրինյան «Մանդրինյան լեզուի», ա. տարի	25	»
8) » » Նոյն՝ երկրորդ տարի	30	»
9) » » Նոյն՝ երրորդ տարի	60	»
10) » » Նոյն՝ երկրորդ տարի	40	»
11) » » Նոյն՝ երրորդ տարի	50	»
12) Տեր-Ղևոնդյան «Մանդրինյան լեզուի», ա. տարի, նոր տիպ	35	»
13) » » Նոյն՝ երկրորդ տարի	40	»
14) » » Նոյն՝ երրորդ տարի	50	»
15) » » Նոյն՝ երկրորդ տարի	65	»
16) » » Նոյն՝ երկրորդ տարի	30	»
17) » » Նոյն՝ երկրորդ տարի	40	»
18) » » Նոյն՝ երկրորդ տարի	50	»
19) » » Նոյն՝ երկրորդ տարի	50	»
20) » » Նոյն՝ երկրորդ տարի	50	»

Վերջին չորս գրքերի գինը 35% է, իսկ մնացած գրքերի գինը 25% է: Գրքերի վաճառումը կանխիկ է, ամսական 10% դրամով: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 1—3 (6)

ՎԱՐՈՒՆ ԼԻՍՏԱՆԻ
«ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ»

Վաճառվում է բոլոր գրականությունները: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 1—8

ՎԱՐՈՒՆ ԼԻՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ Հայոց վիճակագրական կոնստատորիայի առևտրի մեջ նշանակված է ամսական 15 հոկտեմբերի սույն ամի, առանց կրկնաձևերի, կապալով տալու համար եկեղեցական գինը: Սխալները պատժվում են: Անդամ կոնստատորիայի՝ Գեորգիանցի վրա է: 1—3

ՎԱՐՈՒՆ ԼԻՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ Հայոց վիճակագրական կոնստատորիայի առևտրի մեջ նշանակված է ամսական 15 հոկտեմբերի սույն ամի, առանց կրկնաձևերի, կապալով տալու համար եկեղեցական գինը: Սխալները պատժվում են: Անդամ կոնստատորիայի՝ Գեորգիանցի վրա է: 2—5

Յ. Պարոնյանի «ՏԱՐՆՈՅԵՆ ԵՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԽԻՎԱՐԻ 1892 թ.» վաճառվում է Թիֆլիսի գրականության կոնստատորիայի միջոցով: Գինը է 10 կոպ. յոթուտ հանգ. հեղինակի կարգա ընտանեացի: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 2—5

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ատենում 20 սեպտեմբերի այս տարվա նշանակված է վճարվելու ԱՅՈՒՆԻ կապալով տալու համար երեւանի քաղաքային կոնստատորիայի միջոցով: Գինը է 10 կոպ. յոթուտ հանգ. հեղինակի կարգա ընտանեացի: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 2—3

ՎԱՅԵԼՈՒՉ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ Նոր տարի, Կուրիան, անկիւն երկաթեան և կիրճի փողոցների, Եթ և վեց սենյակներով, ունեն առանձին շքեղ մուտքեր, ջրանցքներ, բազանքներ, վառարաններ և բոլոր յարմարությունները: 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Վ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթություն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ծանապարհով հմուտ հաշվապահներ: Առևտրական կուրսում են առևտրական տնտեսի: Առևտրական տնտեսի կուրսն է: 1) Առևտրական հաշվապահություն, 2) Առևտրական թուղթերի և փողերի հաշվապահություն, 3) Հաշվապահություն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթերի հաշվապահություն, 5) Առևտրական թղթերի հաշվապահություն, 6) Առևտրական և մուտքային կանոնադրություններ և 7) զեղադրություններ: Առևտրական կուրսի 15-ին: Կուրսները կազմակերպվում են սեպտեմբերի 1-ին, ամսական 4-ին մինչև 8 փամբ, կուրսեր հիմնովի բնակարանում, Սոյալական, Աղջկանի փողոցի տանը, № 9 Սերգեյևսկայա և Նազարյան փողոցների անկիւնում, զեղադրությունները, փողերը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՆԱՊԵՍ եղբ. Ծովանյանների բանկային գրասենյակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 16—25 (Ե. Շ.)

„ДВОРЦОВЫЕ НОМЕРА“ „ДВОРЦОВЫЕ НОМЕРА“

в центре города
Эриванская площадь домъ Лалаева
номера по суточно и по мѣсячно
При номерахъ имѣется женская прислуга.
Французская и мѣстная кухня; отпускаютъ обѣды и на домъ.
Содержательница ОКТAVIA БАРБЕРОНЪ
1—3

Чистый
Жакао
Блокеръ

Чистый
Жакао
Блокеръ

Чистый
Жакао
Блокеръ

Чистый
Жакао
Блокеръ

Чистый
Жакао
Блокеръ

Чистый
Жакао
Блокеръ

ԱՄԵՐԿԱՆԱԿԱՆ ՏԵՐ-ՂԵՌՈՂԴԵԱՆԻ ՎԱՅԵԼՈՒՉ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ատենում 20 սեպտեմբերի այս տարվա նշանակված է վճարվելու ԱՅՈՒՆԻ կապալով տալու համար երեւանի քաղաքային կոնստատորիայի միջոցով: Գինը է 10 կոպ. յոթուտ հանգ. հեղինակի կարգա ընտանեացի: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 2—3

Ս. ՄԱՆՈՒԼԵԱՆԻ
ՉԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տեղի ունեցող առևտրական կուրսերի և փողերի գինը: 1-ից մինչև 10.000 րուբ. համար. 10-ից մինչև 1200. վաճառվում է երկու օրվա ընթացքում: Գինը է 10 կոպ. յոթուտ հանգ. հեղինակի կարգա ընտանեացի: Պատրաստված գրքերի գինը 25% է, 50 օրինակի համար — 20%: Հանձնարարագրումը չօրհանգի վրա է: 2—3

ՊԱՆՍԻՈՆ ՏԵՐ-ՅԱԿՈՎԼԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶԻՍԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ
Նորին գերազանցության կողմից և ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձու կարգադրությամբ յուր ամսի վեցից վերափոխվում է հին գրասարանական ուսումնարանի պետական գիմնազիայի և Բեալական ուսումնարանի ծրագրով: Պանսիոնում կառավարվում են, հայոց եկեղեցական պատմություն, մեկնություն պատմության, հայոց լեզու (հայերի համար), ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, յունարեն, վրացերեն, թուրքերեն լեզուներ, թուրքաբանություն, արվեստ, երկրագիտություն, բնական պատմություն, ռուսաց պատմություն, բնական պատմություն, արվեստագիտություն, ռուսաստանի աշխարհագրություն, բնական պատմություն, նկարչություն, գրություն, խմբական երգեցողություն, երաժշտություն, պար, մարմնամարզություն: Պանսիոնում պատրաստվողները կարող են մանկ գիմնազիայի, բնական ուսումնարանի, Լազարյան ճեմարանի մինչև հինգերորդ դաստիարակության դասընթացին: Աշակերտները ընդունվում են թոշակաւորներ, կիսաթոշակաւորներ և երկնկներ: Ընդունվողները կր սկսվի ոգոստոսի 20-ին: Հասցեն. Թիֆլիս, Սոլոաքի, Վելյամինովսկայա փող., ծածկ. № 11. 7—10 (6)